

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ, Է. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ,
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ,
ԵՐԵՎԱՆ, «ԱՆՏԱՐԵՍ» ՀՐԱՏ., 2019, 556 էջ:

Վերջին երեք տասնամյակներին հրատարակված տնտեսագիտական աշխատությունների միայն մատենագիտական ցանկը կարող է կազմել մի սովոր հատոր: Դրանցում անդրադարձ է կատարվել հանրապետության տնտեսության բազմաթիվ հարցերի: Առաջադրվել են տեսակետներ ու լուծումներ ինչպես առանձին ոլորտների, այնպես էլ ամբողջ տնտեսության համար: Տնտեսական կյանքի շարժը նոր որոնումներ է պարտադրում տնտեսական գիտությանը անցած հետազոծի գնահատման ու ստուգության առումներով: Այս իմաստով ուշագրավ է Աշոտ Մարկոսյանի, Վահագն Խաչատրյանի և Էլյանորա Մաթևոսյանի «Ժամանակակից պետության տնտեսագիտություն» խորագրով հինգ գրքերից բաղկացած մատենաշար ստեղծելու մտահղացումը, որի առաջին գիրքը՝ «Պետության և շուկայի նոր մարտահրավերները» (Եր., 2019) արդեն հրապարակի վրա է: Այն ներառում է հետևյալ հարցերը՝ տնտեսության զարգացման քաղաքատնտեսական մեթոդաբանության ուղիները, գործարարությունը՝ որպես տնտեսության զարգացման մայրուղի, համախառն ներքին արդյունքի արտադրությունն ու օգտագործումը, Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական վերլուծությունը և պետական կարգավորման լծակները, պետության և շուկայի մարտահրավերները: Հաջորդ չորս հատորները բովանդակելու են տնտեսության պետական կարգավորման գործիքակազմի, հանրապետության եկամուտների և հարստության բաշխման, սոցիալական քաղաքականության, արտաքին տնտեսական քաղաքականության հիմնախնդիրները: Հրատարակված աշխատության քննության առարկա են դարձել հանրապետության տնտեսության բոլոր էական բաղադրիչները և, ըստ այդմ, տնտեսագիտության դերը «պետություն-հասարակություն-անհատ առերևույթ պարզ թվացող, սակայն բազմաթիվ խորքային դժվարություններ ու նրբություններ պարունակող փոխհարաբերություններում» (էջ 7-8):

Շատ է ընդլայնվել տնտեսագիտության տեսադաշտը՝ ոչ կապակից թվացող երևույթները դարձել են կապակից: Ինչպես ասում է Ջեյ Խրիշլայֆերը, տնտեսագիտության տեսությունը դարձել է «հասարակական գիտության ունիվերսալ քերականությունը»: Եվ կարևոր նշանակություն է ստանում այն, թե ինչ սկզբունքներով, ինչ մեթոդներով

վերլուծել տնտեսական երևույթները: Միանգամայն իրավացիորեն գրախոսվող աշխատության մեջ նշյալ խնդիրը առաջնային է:

Կա մի հին առակ. տնային տնտեսուհին որոշում է ճաշ պատրաստել խոհարարական գրքին ճիշտ համապատասխան, սակայն այդպես էլ դա նրան չի հաջողվում, քանի որ այնտեղ գրված չէ, որ ճաշը պատրաստելուց առաջ անհրաժեշտ է վառել կրակը: Այսինքն՝ առանց որոշակի մեթոդների կիրառման հնարավոր չէ համակարգել ու ճանաչել տնտեսական գործընթացները:

Աշխատության մեջ համատեղված են տարբեր սկզբունքների և տարբեր մեթոդների ընձեռած հնարավորությունները: Լինեն դրանք համեմատական վերլուծություններ, պատմական էքսկուրսներ, թե նկարագրական մոտեցումներ, ներկայանում են որպես հետազոտական բաղադրիչներ, որոնք թույլ են տալիս ընթերցել տնտեսական կյանքի բովանդակության շերտերն իրենց շարժման մեջ:

1990-ական թվականներին հասարակության շուկայական փոխակերպությունը և՛ տնտեսական, և՛ սոցիալական, և՛ բարոյական, և՛ հոգեբանական արժեքների համակարգերի փոփոխություն էր ենթադրում, որը պիտի անհատի պահվածքը ենթարկեր կատարված դեպքերի քննությանը: Դրանում առանձնահատուկ նշանակություն ուներ մասնավոր սեփականության հաստատությունը: Հեղինակները մասնավոր սեփականությունը կամ դրա իրավունքը իրավացիորեն համարում են «ազատ շուկայի ատաղձը և առանցքը, որոնց շուրջ պտտվում են հարաբերությունները» (էջ 29): Մինչդեռ խորհրդային տարիներին մարդիկ դադարել էին սեփականատեր լինելուց: Հասարակությունը գրկվել էր սեփականությանը բնորոշ ավանդույթներ ստեղծելուց: Սեփականությունն ի վերջո միայն մի կտոր հող կամ նյութական մի այլ բան ունենալը չէ: Այն աստիճանաբար մշակում է մարդու հասարակական պահվածքի որոշակի նորմեր, սովորություններ, փոխանցելիության հատկանիշներ, և եթե ընդհանուր ձևով բնութագրելու լինենք՝ նրա տնտեսական մշակույթը: Ահա այդ ձգտումը՝ լրացնելու անցյալի դատարկությունը, հաճախ մարդուն դարձնում է յուրացնող: Մինչդեռ սեփականության կարևոր գործառույթը ստեղծագործականն է: Այդպիսի իրավիճակում գործում է անհատի կամ աշխատանքային անձնակազմի դրական կամ բացասական պահվածքի մոդելը: Այստեղ է, որ, ինչպես նկատում են աշխատության հեղինակները, մասնավոր սեփականությունը դառնում է «պետության գործունեության գնահատման հիմնական պարամետրերից կամ հատկանիշներից ամենակարևորներից մեկը, եթե ոչ ամենակարևորը: Մասնավոր սեփականությունը այն իրական ինստիտուտն է կամ լակմուսի թուղթը, որը լավագույնս է բնութագրում հասարակության իրավիճակը» (էջ 29-30): Խոսքը վերաբերում է մասնավոր սեփականության պաշտպանության օրենքներին և կիրառմանը, որում դրսևորվում է կառավարության վերաբերմունքն

այդ ինստիտուտի նկատմամբ, որի ամեն մի խախտում իր հետ պիտի բերի շղթայական ռեակցիա:

Հակասական էին կատարվող փոփոխությունները: Մի կողմից նորոգություն ակնկալող ռեֆորմները, իսկ մյուս կողմից՝ ուժգնացող սոցիալական հակասությունները, հասարակության տարբեր շերտերի եկամուտների ու կենսամակարդակների աճող ճեղքվածքը պիտի պայմանավորեին նոր շարժման անհրաժեշտությունը: Գոյություն ունի մի օրինաչափություն. եթե վճռական ռեֆորմներ չեն իրականացվում, ապա կիսատ-պռատ փորձերն արագացնում են հին իշխանության հարատևության ժամանակը: «Ինչպես ցույց է տալիս վերջին 20-30 տարիների աշխարհի բազմաթիվ երկրների փորձը, որոնցում տեղի են ունեցել հեղափոխություններ, դրանցում կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները, դառնալով բնակչության հիմնական մասի համար ապրելակերպի ծանր ու դժվարին պատճառ՝ առաջացնելով ընդհուպ մինչև կենսամակարդակի նվազում, հիմք են դառնում ամենից առաջ քաղաքական արմատական վերափոխումների (հեղափոխության), ինչին հաջորդում է տնտեսական հեղափոխությունը» (էջ 41): Հեղինակներն այդ կացությունն են ուրվագծում նաև Հայաստանի համար: Կոռուպցիան և բյուրոկրատիան դարձել էին հասարակության պահվածքի նորմ: Այդ են հաստատում աշխատության մեջ բերված վիճակագրական տվյալները 2008-2018 թթ. արտագաղթի, գործազրկության, եկամուտների շարժի վերաբերյալ: Նշված ժամանակամիջոցում խոշոր չափերի արտագաղթի պայմաններում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը ՀՀ-ում նվազել է (73,2 ԱՄՆ դոլարով), որը տվյալ խմբի երկրների միջին մակարդակի 56,4%-ն է:

Լև Տոլստոյը մի առիթով նկատել է. «Աշխատավոր մարդիկ ուտում են, որպեսզի արագ կշտանան և գործի անցնեն, իսկ հարուստ և պարապ մարդիկ, որպեսզի երկար վայելք ապրեն և շարունակեն ուտելու պրոցեսը բավականության և զվարճանքի համար: Նրա հերոսը՝ Ստիվա Օբլոնսկին, պնդում է, որ այդպիսի վիճակը քաղաքակրթության և առաջընթացի նշան է»¹: Ինքնաբերաբար առաջանում է համեմատության զուգահեռը հանրապետության հետ: Իսկ դա արդեն հակասում է Հայաստանի տնտեսական կարգի հիմքը հանդիսացող սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքին՝ ուղղված «պետական քաղաքականության միջոցով ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը» (էջ 30):

Հասարակությունը և հատկապես գործարար աշխարհի մարդիկ հաճախ պատկերացում չունեն, թե ինչպես է աշխատում տնտեսությունը, որոնք են պետության գործառույթները: Եվ այս իմաստով աշխատության նպատակներից է «տնտեսագիտությունը հանրամատչելի

¹ «Литературная газета», № 37 (6704), 4-10 сентября 2019.

դարձնելու և մարդկանց արդի տնտեսագիտության գիտելիքներով հարստացնելու գործը» (էջ 7): Հեղինակներին հաջողվել է գիտականության սկզբունքը զուգորդել նշված ցանկությանը: Դրա կիրառումը տեսանելի է հատկապես համախառն ներքին արդյունքի արտադրությանն ու օգտագործմանը, հանրապետության մակրոտնտեսական իրավիճակին և պետական կարգավորման լծակներին նվիրված բաժիններում՝ ազգային հաշիվների համակարգի հիմնական հասկացությունների բացատրությունը զուգորդելով աշխարհի և խորհրդային նախկին հանրապետությունների համադրական դիտարկումներով:

Սովորաբար պահանջարկի ու առաջարկի կորերը արտաքուստ պարզ, սակայն իրենց էությամբ մի շարք բարդ կոորդինատների համակարգ են, որոնք ցույց են տալիս, թե ինչպես դրանց այս կամ այն հատվածում խաչաձևման արդյունքում իբր ձևավորվում է տնտեսական հավասարակշռություն: Մինչդեռ շատ բան մնում է սովորում: Տնտեսագիտության տեսությունն առայժմ հնարավորություն չի ընձեռում հաշվառելու այդ հավասարակշռության ձևավորման այնպիսի կողմերը, ինչպիսիք են ռացիոնալի և ոչ ռացիոնալի, նյութականի և հոգևորի, անհատի ու հասարակության հոգեբանական կապի ազդակների և շատ այլ բաների դերը: Եվ հեղինակներն իրատեսական հայացքով ամբողջական պահանջարկի ու ամբողջական առաջարկի գործունային վերլուծության և պետական կարգավորման լծակների որոշակիացումներով իրականացնում են պեղումներ, կատարում առաջարկություններ:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում որոշակիորեն ուրվագծված են պետության և շուկայական համակարգի սահմանները՝ որպես լրացուցչական սկզբունքի դրսևորում: Այն հատկապես սուր բանավեճերի առիթ էր տալիս 1990-ական թվականներին, երբ նույնիսկ կարծիքներ էին հնչում, թե պետությունը պետք է լքի շուկան: Նկատել, որ Աշոտ Մարկոսյանը դեռևս երկու տասնամյակ առաջ «Պետությունը և շուկան» մենագրության մեջ ընդլայնում է պետության և շուկայի հարաբերակցության տարածական սահմանները՝ խնդիրը դիտելով կատարվող վերափոխումների տարբեր կապակցություններում²: Պետությանն անհրաժեշտ է ոչ թե հեռանալ շուկայից, այլ մտնել շուկա, պետք է հստակեցնել, թե տնտեսության մեջ պետական հատվածի բաժինը որքան նվազի և ինչ ժամանակամիջոցում, և, ընդհանրապես, ինչ կարգավորիչ գործառնություններ պետք է իրականացնի:

Տնտեսության նորոգությունը իբրև գործնական ծրագիր, միշտ ենթադրում է որոշակի սկզբունքների իրացում: Սա է, որ հարցը ոչ պակաս հրատապություն է ներկայացնում նաև հանրապետության արդի վիճակի համար: Ավելին՝ «... շուկայի ձախողման և պետության ձա-

² Տե՛ս Աշոտ Մարկոսյան, Պետությունը և շուկան, Եր., 2000, էջ 45:

խողման միջև ընտրությունը հենց ժամանակակից տնտեսագիտության հիմնական խնդիրն է: Հիմնական խնդիրը, ինչպես հայեցակարգային, այնպես էլ գործնական հարթության մեջ կայանում է նրանում, որ կանհրաժեշտություն հստակ սահմանել հանրային բարիքների սահմանները և պետական պատասխանատվության գոտիները, այսինքն՝ այն խնդիրները և գործառույթները, որոնք ոչ ոք, բացի պետությունից, արդյունավետ չի կարող իրականացնել: Մնացածը պետք է փոխանցվի մասնավոր հատվածին» (էջ 378):

Խնդիրն այն է, որ հանրապետության նախորդ կառավարությունը չկռահեց զարգացման ուղղությունը՝ նախընտրելով «ավտորիտար կամ կիսավտորիտար կառավարման համակարգը», որը պիտի պայմանավորեր երկրի քաղաքացիների համար «առօրյա կենցաղում, տնտեսական դաշտում, սոցիալական բնագավառում և հանրային կյանքի այլ բնագավառներում» խոչընդոտների ուղին: Այսպիսի պայմաններում շուկան կորցնում է «իր կարգավորիչ և զարգացում ապահովող դերը», հասարակությունը կարծես ընտելանում է բնութագրությունների, որպես թե՛ ամեն ինչ բնական է՝ և՛ շերտավորումը, և՛ հարստության ու աղքատության ծայրահեղ բևեռացումները և այլն:

Հեղինակները չեն տրվել առանց տեսական հիմնավորումների, տեղից ու ժամանակից կտրված, հանրապետության տնտեսությանը ոչինչ չտվող առաջարկությունների գայթակղությանը: Ֆրայբուրգյան դպրոցի տեսաբան Վալտեր Օյկենը նկատում է. «Ձուտ էմպիրիկ մտածողության մարդիկ կանխապես անվստահություն ունեն տեսական աշխատանքների նկատմամբ ... դրանով նրանք շրջապատից բացառում են նրանց, ովքեր հնարավորություն ունեն ճանաչելու տնտեսական իրականությունը»: Ա. Մարկոսյանի, Վ. Խաչատուրյանի, Է. Մաթեվոսյանի «Ժամանակակից պետության տնտեսագիտությունը» տալիս է այդ հնարավորությունը:

ՌՈՒԲԵՐՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ